ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 25 ՏԱՐԻՆ

Սովետական Միության հերոս Գ. Հ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Քառորդ դար է մեզ բաժանում այն օրվանից, երբ սովետական հրետանին իր վերջին համաղարկը տվեց ֆաշիզմի որջի՝ Բեռլինի վրա։ Վերջացավ Հայրենական մեծ պատերազմը, որ տևեց 1418 օր։

Շուրջ չորս տարվա ընթացքում սովետական ողջ ժողովուրդը ծանր զոհաբերությունների գնով պաշտպանեց իր հայրենիքի աղատությունը, որը ձեռք էր բերվել մեծ Հոկտեմբերի բոցերի մեջ։

Սոցիալիստական հայրենիքի պաշտպանությանը մասնակցեցին նաև հայ ժողովրդի զավակները։ Մարտադաշտերում նրանք, սովետական բազմազգ ժողովրդի զավակների հետ ուս-ուսի տված, մարտնչում էին, չխնայելով անգամ իրենց կյանքը։ Որպես հայ ժողովրդի հավաքական ռազմական ուժ, կազմակերպվեցին մի քանի հայկական զորամիավորումներ, որոնք իրենց ինքնուրույն մարտական գործողություններով բազմիցս արժանացել են կառավարական պարգևների։

89-րդ հայկական դիվիզիան, գեներալ Ն. Սաֆարյանի հրամանատարությամբ, Կովկասի լեռներից մարտերով հասավ Բեռլին և Կարմիր բանակի մյուս զորքերի հետ գրոհեց Ռայխստագի վրա։ Դիվիզիան ստացավ «Թամանյան» պատվավոր կոչումը, պարգևատրվեց Կարմիր դրոշի, Կուտուզովի և Կարմիր աստղի շքանշաններով։ 409-րդ հայկական գիվիզիան իր մարտական մկրտությունն ստացավ Թերեք գետի վրա։ Այնուհետև նրա մարտիկները կռվեցին Միլերովոյի տակ, Դնեպրի ափերին, Կիրովոգրադի համար, ռումինական հողում և Հունգարիայում։ Պատերազմի եզրափակիչ շրջանում դիվիզիան ուշքի ընկավ Բրատիսլավա քաղաքի ազատագրման համար մղված մարտերում։ Նա ստացավ «Կիրովոգրադյան» և «Բրատիսլավյան» պատվավոր կոչումները և պարգևատրվեց Բոգդան Խմելնիցկու շքանշանով։

Հայկական այդ զորամասերից բացի, հազարավոր հայ մարտիկներ, սպաներ ու գեներալներ կռվում էին Սովետական Միության զինված ուժերի տարբեր զորամասերի կազմում և իրենց սխրանքներով ետ չէին մնում մեր հայրենիքի եղբայրական մյուս ժողովուրդների զավակներից ու դուստրերից։ Նրանք մարտնչում էին Բալթիկ ծովի ափերին, պաշտպանում էին Լենինի քաղաքը, կռվում Մոսկվայի մատույցներում, Կերչի և Թամանի թերակղզիներում, Բելոռուսիայի և Բրյանսկի անտառներում, Կովկասի ու Ստալինգրադի մատույցներում, Կուրսկի աղեղում, Դնեպրի ափերին, ինչպես նաև թշնամու թիկունքում՝ մեր երկրի օկուպացված շրջաններում ու եվրոպական տարբեր երկրներում (Իտալիա, Ֆրանսիա, Չեխոսլովակիա)։ Ամերիկյան բանակի շարքերում էին շուրջ 20.000 հայ մարտիկներ։

Պատերազմի տարիներին աճեցին այնպիսի կարկառուն ռազմական ղեկավարներ, ինչպիսիք են Սովետական Միության մարշալ Բաղրամյանը, նա-

վատորմի ծովակալ Իսակովը, ավիացիայի մարշալ Խանֆերյանը (Խուդյակով), հրետանու գեներալ-գնդապետ Բարսեղովը, զրահատանկային զորքերի մարշալ Բաբաջանյանը և ուրիշներ։

Հայրենական պատերազմի տարիներին տարբեր ռազմաճակատներում կատարած ռազմական սխրագործությունների համար շուրջ 70 հազար հայ մարտիկներ պարգևատրվեցին Սովետական Միության մարտական շքանշաններով, 106 մարդ արժանացան Սովետական Միության հերոսի կոչման, մոտ 25 շարքայիններ պարգևատրվեցին փառքի բոլոր երեք աստիճանի շքանշաններով՝ ստանալով «Փառքի ասպետի» կոչում։

Թիկունքում կատարած հայրենանվեր գործերով հայ ժողովուրդը ետ չէր մնում եղբայրական մյուս ժողովուրդներից։ Հանրապետության արդյունաբերությունը վերակառուցվել էր և ռազմական արտադրանք էր տալիս բանակին, գյուղի աշխատավորները անում էին ամեն ինչ՝ ռազմաճակատին օգնելու համար։ Թիկունքում կատարած անձնվեր աշխատանքի համար պարգևատրվեց շուրջ 380 հազար մարդ։

Իրենց հայրենասիրական աշխատանքով ետ չէին մնում նաև սփյուռքի հայերը, որոնց միջոցներով կառուցվեց ու Կարմիր բանակին հանձնվեց Բաղրամյանի անվան տանկային շարասյունը։

* * *

1941 թ. հունիսի 22-ի վաղ առավոտյան գերմանական հաղարավոր թրնդանոթներ կրակ բացեցին սովետական սահմանի վրա, ֆաշիստական հորդաները հրով ու սրով մտան մեր երկիրը։ Ֆաշիստական սավառնակները ռմբակոծեցին սահմանամերձ քաղաքները։ Թշնամու առաջին հարվածը հերոսաբար ընդունեցին մեր սահմանապահ զորամասերը։ Բավական է հիշել Բրեստի ամրոցի հերոսական պաշտպանությունը, որի շնորհիվ ռազմաճակատի այդ հատվածում երկար ժամանակով կասեցվեց ֆաշիստական զորքերի առաջխաղացումը։

Պատերազմի առաջին երեք շաբաթվա ընթացքում թշնամուն հաջողվեց մտնել երկրի խորքը։ Կարմիր բանակը, անբարենպաստ ու ծանր պայմաններում մարտեր մղելով գերմանական դավթիչների դեմ, ծանր կորուստներ կրեց։

Արտակարգ իրադրության պայմաններում կոմունիստական կուսակցությունը և սովետական ժողովուրդը հերոսական ջանքեր գործադրեցին Կարմիր բանակը ամրապնդելու, երկրի էկոնոմիկան պատերազմական պայմաններին համապատասխան վերակառուցելու և երկիրը ռազմական ճամբարի վերածելու համար։

Ստեղծվեց ռազմական ու տնտեսական գերագույն օրգանը՝ Պետական պաշտպանության կոմիտեն։ Պատերազմի հենց հաջորդ օրը, հունիսի 23-ին ԵՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Ժողկոմսովետը որոշում ընդունեցին կուսակցական և պետական օրգանների աշխատանքների մասին՝ «Ամեն ինչ հաղթանակի համար», «Բոլոր ուժերը հակառակորդին ջախջախելու համար» նշանարանով։ Մեծ ջանքերի ու զոհերի գնով պատերազմի երրորդ շաբաթվա վերջում Կարմիր բանակը դանդաղեցրեց թշնամու առաջխաղացումը գլխավոր ուղղություններում, նակատը որոշ չափով կայունացավ։ Սակայն ֆաշիստական բանակների հարձակումը շարունակվում էր։

Հիտլերը և նրա գլխավոր շտաբը գոռոզամտորեն հայտարարում էին, թե իրենց զորքերը Մոսկվայում կլինեն 2—3 շաբաթ հետո, հույս ունենալով, որ արևելյան երթը նույնպես կավարտեն «կայծակնային» արագությամբ։ Սակայն պատերազմի հենց առաջին օրերին Կարմիր բանակը ապացուցեց, որ ֆաշիստական ստրատեգիան արատավոր է։ Լենինգրադի, Օդեսայի, Սևաստոպոլի և Կիևի պաշտպանությունները ցույց տվեցին ամբողջ աշխարհին, որ սովետական ժողովրդի կամքը անհողդողդ է, որ Կարմիր բանակը պատրաստ է ամեն գոհաբերության գնով պաշտպանել հայրենի յուրաքանչյուր թիզ հողը։

250 օր տևեց Սևաստոպոլի դյուցազնական պաշտպանությունը։ 900 օր, գիշեր ու ցերեկ մոլեգնում էր պատերազմը Նևայի վրա։ Ո՛չ զրկանքները, ո՛չ էլ սովը չկարողացան խորտակել Լենինի քաղաքի հերոս պաշտպաններին.

Հիտլերի և նրա գեներալների հատուկ ուշադրության կենտրոնն էր սովետական երկրի մայրաքաղաք Մոսկվան, որի մատույցներում կենտրոնացված էին ֆաշիստական բանակի գլխավոր ուժերը։ Հիտլերյան հրամանատարությունը պատրաստվում էր Կարմիր հրապարակում հաղթանակի զորահանդես անցկացնել։ Կարմիր բանակը իր հարվածներով թաղեց այդ ցնորամտությունը ևս։ Սեպտեմբերի վերջերին սկսվեցին խոշոր մարտերը Մոսկվայի տակ։ Մոսկվայի գլխին կախված վտանգը ալեկոծեց սովետական ամբողջ ժողովրդին։ Մոսկվայի պաշտպանության համար ձեռնարկվեցին բոլոր անհրաժեշտ միջոցները։ Հոկտեմբերի վերջին Արևմտյան և Կալինինի ռազմաճակատների զորքերը մի քանի հակահարված հասցրին թշնամուն։ Մոսկվայի մատույցներում Կարմիր բանակի ուժեղ դիմադրությունը, կուսակցությունն ու կառավարության կտրուկ միջոցառումները շուտով բեկում առաջացրեցին ստեղծված իրադրության մեջ։ Խնդիր դրվեց՝ Մոսկվայի տակ սկսել թշնամու ջախջախումը։ Ձեռնարկված միջոցների շնորհիվ ուժերի հարաբերությունը Մոսկվայի տակ փոխվեց հօգուտ Կարմիր բանակի։ Դեկտեմբերի 5-ին Կալինինի ռազմաճակատը և Կենտրոնական ռազմաճակատի աջ թևը անցան հակահարձակման։ Այնուհետև հարձակման անցան Կենտրոնական ռազմաճակատի ձախ թևը և Հարավ-արևմտյան ռազմաճակատը։ Սկսվեց ֆաշիստական զավթիչների ջախջախումը և խուճապային նահանջը դեպի արևմուտք։ Միայն Կալինինի ռազմաճակատի զորքերը հարձակման ընթացքում ոչնչացրին կամ շարքից հանեցին թշնամու 6 դիվիզիա, ավար առան 956 թնդանոթ, 153 տանկ, 25 սավառնակ, 3250 ավտոմեքենա, 844 գնդացիր և մեծաքանակ այլ ռազմական նյութեր[1]։ Չորս ամսվա հարձակողական մարտերում սովետական զորքերը ֆաշիստներին ետ մղեցին 100—350 կմ։ Այդ մարտերում Կարմիր բանակը ջախջախեց գերմանական շուրջ 50 դիվիզիա։ Դա առաջին խոշոր պարտությունն էր, որ կրեց հիտլերյան բանակը։ Այդ հաղթանակը սովետական ժողովրդի համար ունեցավ քաղաքական, բարոյական և ռազմական խոշոր նշանակություն։

1942 թ. դարնան և ամռան ամիսներին գերմանա-ֆաշիստական հրամանատարությունը խոշոր ուժեր կենտրոնացրեց սովետա-գերմանական ռազմաճակատում, որոնք սկսեցին առաջանալ դեպի արևելք ու հարավ-արևելք՝ նպատակ ունենալով գրավել Կովկասը, դուրս գալ Վոլգայի մերձակայքը Ստա-

[1] Այստեղ և հետագայում թվական տվյալները բերվում են „Великая Отечественная война Советского Союза“ (Воениздат, М., 1965) գրքից։

լինգրադի շրջանում և այդպիսով անջատել երկրի հյուսիսային շրջանները հարավից։

Հուլիսին թշնամուն հաջողվեց ճեղքել Կարմիր բանակի պաշտպանությունը և հասնել Դոն գետի մեծ ոլորանին, որտեղ Դոնը և Վոլգան մոտենում են միմյանց։ Ծանր ու երկարատև մարտեր սկսվեցին Ստալինգրադի մատույցներում։

Սովետական ողջ ժողովուրդը լարված հետևում էր պատերազմական գործողությունների ընթացքին և թիկունքում կատարած իր անձնվեր աշխատանքով կոփում էր հաղթանակը։ Բանվորները և գյուղացիները ռազմաճակատը ապահովում էին ամեն ինչով։ Աշխատանքային այդ պայքարից հեռու չէր կանգնած նաև սովետական ինտելիգենցիան, որի բազմաթիվ ականավոր ներկայացուցիչները իրենց լուման մուծեցին հաղթանակը նվաճելու գործում։ Դեռ պատերազմի սկզբին բազմաթիվ գիտահետազոտական ինստիտուտներ տեղափոխվել էին երկրի արևելյան շրջանները, այնտեղ ծավալելով իրենց գիտական գործունեությունը։ Նրանք մեծ աշխատանք ծավալեցին արևելքում նոր հանքավայրերի հայտնաբերման ու շահագործման և բանակը լավագույն զենքով զինելու գործում։

Դեռևս Ստալինգրադի պաշտպանական մարտերի սկզբում սովետական գլխավոր հրամանատարությունը մշակում էր թշնամու ջախջախման պլանը։ Այդ նպատակին հասնելու համար ստեղծվում էին բոլոր անհրաժեշտ նախադրյալները։

Ստալինգրադյան ճակատամարտի առաջին շրջանը, որ տևեց մինչև 1942 թ. նոյեմբերի 19-ը, Ստալինգրադի պաշտպանության համար մղվող մարտերի ամենածանր ժամանակաշրջանն էր։ Մեր զորքերը ունեցան մեծ կորուստներ, բայց գերմանացիները նույնպես քիչ կորուստ չտվին։

Գերմանական բանակը, իր սատելիտների բանակների հետ, սովետա-գերմանական ճակատում այդ ժամանակ ուներ 6270000 զինվոր ու սպա, 70980 հրանոթ և ականանետ, 6800 տանկ, 3500 մարտական սավառնակ, իսկ սովետական գործող բանակում կար 6124000 մարդ, 77734 հրանոթ և ականանետ (չհաշված ռեակտիվ ականանետ-«կատյուշաները»), 6956 տանկ, 3254 մարտական սավառնակ։ Այս թվերը ցույց են տալիս, որ պատերազմի առաջին շրջանում ֆաշիստական բանակների ունեցած թվական առավելությունը այժմ արդեն չկար։

Նոյեմբերի 19-ին, ժամը 7 անց 30 րոպեին սովետական հրետանու հզոր համազարկը աղդարարեց ստալինգրադյան ճակատամարտի երկրորդ փուլի սկիզբը. Հարավ-արևմտյան և Դոնի ռազմաճակատների զորամասերը անցան հարձակման։ Ջարդ ու փշուր անելով հակառակորդի առաջավոր պաշտպանական գիծը, սովետական զորքերը նոյեմբերի 23-ին ավարտեցին գերմանա-ֆաշիստական զորքերի շրջապատումը Դոնի և Վոլգայի միջև ընկած շրջանում։ Սովետական հրամանատարությունը, ավելորդ արյունահեղությունից խուսափելու համար, շրջապատված զորքերին առաջարկեց անվերապահորեն զենքերը վար դնել։ Հիտլերականները մերժեցին այդ առաջարկը, որից հետո սկսվեց շրջապատված զորքերի ջախջախումը։ Թշնամին չդիմացավ և սկսեց նահանջել։ Ամբողջ զորամասեր, նույնիսկ մեծ միավորումներ գերի էին հանձնվում։ Հունվարի վերջերին շրջապատված զորամասերը մեր զորքերի կողմից մասնատվեցին և ոչնչացվեցին կամ գերվեցին։ Գերմանա-ֆաշիստական բանակը ստա-

լինգրադյան ճակատամարտի վերջին փուլում կորցրեց շուրջ 330 հազար զինվոր ու սպա, այդ թվում 24 գեներալ՝ ֆելդմարշալ Պաուլյուսի գլխավորությամբ։

Թշնամու ուժերի ջախջախումը Վոլգայի ափերին ռազմա-քաղաքական խոշոր նշանակություն ունեցավ, շրջադարձային փուլ հանդիսանալով համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքում։ Ստալինգրադի մոտ տարած հաղթանակը սովետական զինված ուժերի տակտիկայի և ստրատեգիայի հաղթանակն էր։ Կարմիր բանակի հարվածների տակ հողմացրիվ եղավ գերմանական ռազմական դոկտրինան։ Միաժամանակ սառեցին որոշ չեզոք երկրների ղեկավարների տաք գլուխները, որոնք սպասում էին Ստալինգրադի ճակատամարտի անհաջող վախճանին, որպեսզի նոր ճակատ բացեն սովետական բանակի դեմ.

Վոլգայի ափերին տարած հաղթանակից հետո Կարմիր բանակը իր հարձակողական մարտերը ծավալեց այլ ուղղություններում։ Լենինգրադից մինչև Կովկաս սովետական զորքերը շարունակում էին զավթիչներին քշել դեպի արևմուտք։ Փետրվարի 8-ին ազատվեց Կուրսկը, իսկ հաջորդ օրը՝ Բելգորոդը։ 70 օր տևեցին Լենինգրադյան և Վոլխովյան ռազմաճակատների մղած մարտերը, մինչև որ նրանց հաջողվեց ճեղքել Լենինի քաղաքի պաշարման օղակը։

1942 թ. ամռանը գերմանա-ֆաշիստական բանակը դեռևս մեծ ուժ ուներ։ Օգտվելով Եվրոպայում երկրորդ ճակատի բացակայությունից, գերմանացիները կարողացել էին սովետա-գերմանական ճակատում կենտրոնացնել հսկայական բանակ։ Ուժերի հարաբերությունը այդ ժամանակ հետևյալն էր։

Զորքեր և զենքի տեսակներ	Կարմիր բանակ	Գերմանական բանակ
Զինվոր և սպա	6442000	5325000
Հրանոթ և ականանետ	103085	56250
Տանկ և ինքնագնաց հրետանի	9918	5850
Մարտական սավառնակ	8357	2980

Ինչպես ցույց են տալիս այս թվերը, թեպետ թշնամին մեծ ուժ ուներ, սակայն քանակական տեսակետից նա արդեն ետ էր մնում Կարմիր բանակից։

Նախորդ ամիսների ռազմական գործողությունների հետևանքով Կուրսկի շրջանում առաջացել էր ուռուցիկ մասով դեպի արևմուտք դարձած մի ելուստ, այսպես կոչված «Կուրսկի աղեղը», որի ծայրերը հյուսիսում հասնում էին մինչև Օրյոլ, իսկ հարավում՝ Բելգորոդ և Խարկով քաղաքները։ Հիտլերյան հրամանատարությունը որոշել էր ամռանը այդ ճակատամասում հյուսիսից ու հարավից անցնել հարձակման և շրջապատել ու ոչնչացնել սովետական գլխավոր ուժերը։ Այդ նպատակով մի քանի թարմ դիվիզիաներ էին փոխադրվել Ֆրանսիայից և Գերմանիայից, զորքերը ստացել էին նոր տանկեր և այլ տեխնիկա։

Խոշոր մարտերի էին պատրաստվում նաև սովետական զորքերը։ Գերագույն գլխավոր հրամանատարությունը նախատեսում էր ոչնչացնել գերմանական «Միջնաբերդ» և «Հարավ» խմբավորումները և ազատել ձախափնյա Ուկրաինան։ Կարմիր բանակի զորամասերը Կուրսկի աղեղում անցել էին կանխամտածված խոր պաշպանության, նպատակ ունենալով հակահարված տալ գերմանական տանկային գրոհներին և ապա անցնել հակահարձակման։ Հուլիսի 3-ին սովետական հրամանատարությունը բացահայտեց թշնամու հարձակման

օրը և, կանխելով նրա հարձակումը, հուլիսի 5-ի լուսադեմին սովետական հրետանին իր ամբողջ կրակային ուժով հարվածեց թշնամուն։ Սկսվեցին Հայրենական մեծ պատերազմի ամենախոշոր ճակատամարտերը։

Մեծագույն կորուստների գնով ֆաշիստական զորքերին հաջողվեց Օրյոլի շրջանում ճեղքել սովետական զորքերի պաշտպանությունը և խորանալ 8—13 կմ դեպի արևելք։ Բելգորոդի շրջանում ևս ֆաշիստներին հաջողվեց մխրճվել մեր պաշտպանության մեջ։ Գերմանացիների այդ հաջողությունը, սակայն, քիչ արդյունք տվեց։ Հուլիսի 12-ին ռազմաճակատում մեծ բեկում եղավ. գրեթե ամենուրեք կասեցվեց զավթիչների առաջընթացը։ Ինչպես նախատեսել էին սովետական ռազմաճակատների հրամանատարները, այդ մի քանի օրվա ընթացքում սովետական զորքերը իրենց պաշտպանական դիրքերից ուժեղ հակահարված հասցրին գերմանական տանկային բռունցքին, իսկ հետո անցան հակահարձակման, որն սկսվեց հուլիսի 12-ի առավոտյան։ Հրետանու և ավիացիայի հուժկու հարվածներից հետո սովետական զորքերը անցան գրոհի։ Երկու օրվա մարտերից հետո մեր զորքերը ճեղքեցին թշնամու ուժեղ պաշտպանական գիծը և խորացան ավելի քան 25 կմ։

Բազմօրյա թեժ ճակատամարտերից հետո, օգոստոսի 5-ին ռուսական երկու հին քաղաքներ Օրյոլն ու Բելգորոդը ազատագրվեցին ֆաշիստական օկուպանտներից։ Այս մեծ հաղթանակի կապակցությամբ առաջին անգամ մեր հայրենիքի մայրաքաղաք Մոսկվան սալյուտ տվեց ի պատիվ Արևմտյան, Բրյանսկի, Կենտրոնական, Վորոնեժի և Տափաստանային ռազմաճակատների զորքերի։

Կուրսկի ճակատամարտի շնորհիվ, որը տևեց 50 օր և ամենախոշորն էր համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքում, Հիտլերյան բանակը կանգնեց վերջնական կրախի առաջ։ Ֆաշիստական բանակը այդ պարտությունից հետո այլևս ոտքի չկանգնեց։ Նույնիսկ բուրժուական մամուլը ստիպված էր խոստովանել Կուրսկի աղեղում Կարմիր բանակի տարած հաղթանակի մեծությունը։ Այսպես, անգլիական ռեակցիոն լրագրող Գ. Սոլսբերին խոստովանում էր. «Այդ ճակատամարտը թերևս ամենամեծ ճակատամարտն էր երկրորդ համաշխարհային պատերազմում... Գերմանացիների պարտությունը այն աստիճան սարսափելի էր, որ նրանք այլևս չկարողացան իրենց ձեռքը վերցնել ստրատեգիական նախաձեռնությունը Արևելյան ճակատում... Արդյունքը ոչընչացնող եղավ։ Գերմանացիները ետ շպրտվեցին խոշոր կորուստներով։ Մի քանի օրվա մեջ պարզվեց, որ նրանց հասցված է այնպիսի սարսափելի հարված, որ նրանք այլևս երբեք չեն կարողանա ուշքի գալ»[2]։

Վոլգայի ափերին և Կուրսկի աղեղի շրջանում կրած պարտությունը կատաստրոֆիկ հետևանքներ ունեցավ գերմանա-ֆաշիստական զավթիչների համար։ Սովետական զորքերը այդ երկու մեծ հաղթանակների շնորհիվ մեծագույն հեռանկարներ ստացան վերջնական հաղթանակի հասնելու տեսակետից։

Հիտլերյան բանակները, չդիմանալով Կարմիր բանակի հարվածներին, սկսեցին նահանջել ձախափնյա Ուկրաինայից և Դոնբասից, նահանջի ժամանակ գազանաբար ոչնչացնելով բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր, բնաջնջելով կամ դեպի արևմուտք բռնի փոխադրելով հարյուր հազարավոր խաղաղ բնակիչների։

---

[2] Տե՛ս „Коммунист", № 1, 1970, էջ 89։

Սովետական զորքերը անընդհատ մարտերով հասան Դնեպրին, որի ափերը գերմանացիների կողմից խիստ ամրացվել էին։ Տափաստանային ռազմաճակատի 7-րդ գվարդիական բանակի զորամիավորումները սեպտեմբերի 25-ին Վերխնե-Դնեպրովսկի շրջանում սկսեցին անցնել Դնեպրը։ Նրա աջ ափին պլացդարմներ գրավելու և պահպանելու համար 2438 զինվոր, սերժանտ, սպա ու գեներալ արժանացան Սովետական Միության հերոսի բարձր կոչման։

Դնեպրն անցնելուց հետո սովետական զորքերի առաջ խնդիր դրվեց ազատագրել Ուկրաինայի մայրաքաղաք Կիևը։

Նոյեմբերի 3-ին, հրետանային հզոր նախապատրաստումից հետո, Ի. Դ. Չերնյախովսկու և Կ. Ս. Մոսկալենկոյի բանակների տանկերն ու հետևակը անցան հարձակման, արևմուտքից շրջանցելով Կիևը։ Երեք օր հետո հակառակորդի գիմադրությունը խորտակվեց։ Հոկտեմբերյան հեղափոխության 26-րդ տարեդարձի հանդիսավոր օրը Մոսկվան հրետանային սալյուտ տվեց Կիևի ազատագրման ստթիվ։

Կարմիր բանակի հարձակողական վիթխարի թափը հրամայաբար պահանջում էր նորանոր սավառնակներ, տանկեր, հրետանի և այլ զենք ու զինամթերք։ Երկրի վերակառուցված արդյունաբերությունը արդեն ի վիճակի էր ամեն ինչով բավարարել բանակի պահանջները։ Բավական է ասել, որ 1943 թ. ավիացիոն արդյունաբերությունը թողարկեց մոտ 35 հազար սավառնակ։ Հրետանային գործարանները նույն թվականին բանակին տվեցին 130 հազար թընդանոթ։

1942 թ. նոյեմբերից մինչև 1943 թ. դեկտեմբերն ընկած ժամանակաշրջանում, չնայած երկրորդ ճակատի բացակայությանը, սովետա-գերմանական ճակատում արմատական բեկում առաջ եկավ հօգուտ սովետական բանակի։ Այս ժամանակաշրջանում Կարմիր բանակը խորտակիչ հարված հասցրեց ֆաշիստական 218 դիվիզիաների, որոնցից 36-ը ամբողջովին ոչնչացված կամ գերված էին։ Թշնամու թիկունքում անձնազոհ կռվում էին խիզախ պարտիզանները։ Ռուսաստանի Ֆեդերացիայում, Ուկրաինայում, Բելոռուսիայում, մերձբալթյան երկրներում և Մոլդավիայում ծավալվել ու թափ էին առել ժողովրդական վրիժառուների մարտական գործողությունները։

Կարմիր բանակի հաղթանակը ցույց տվեց սոցիալիստական պետության հզորությունը, մեր երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների անքակտելի միասնությունը և համախմբվածությունը Լենինի կուսակցության շուրջը։

Սովետական զինված ուժերի հաղթանակները բարերար ազդեցություն ունեցան եվրոպական այն ժողովուրդների վրա, որոնք հեծում էին ֆաշիզմի կրնկի տակ։ Այդ երկրներում աճում էին հակաֆաշիստական տրամադրությունները, ուժեղանում էր կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ազդեցությունը ժողովրդական լայն մասսաների վրա։ Էլ ավելի մեծացավ Սովետական Միության հեղինակությունն ու ազդեցությունը միջազգային ասպարեզում։

Կիևի ազատագրումից հետո սովետական հրամանատարության առաջ խնդիր էր դրված վերջնականապես վերացնել Լենինգրադի պաշարումը։ Այդ խնդրի իրականացման համար 1944 թ. հունվարի 14-ին Լենինգրադյան ռազմաճակատի զորքերը անցան հարձակման։ Նույն օրը հարձակման անցան նաև Վոլխովյան ռազմաճակատի զորքերը։ Հարձակողական այդ գործողությունները իրենց կրակով ապահովում էին Բալթիկ ծովի նավատորմիղի հեռահար

հրետանին և ավիացիան։ Հունվարի 20-ին այդ երկու ռազմաճակատների հերոսական մարտերի արդյունքը եղավ այն, որ ֆաշիստական զավթիչները Լենինգրադից հեռու շպրտվեցին։ Այդ մեծ հաղթանակի համար Լենինգրադի պաշտպանների պատվին սալյուտ տրվեց։

Գերմանա-ֆաշիստական օկուպանտներից սովետական հողը լիովին մաքրելու և Լեհաստանի, Չեխոսլովակիայի և օկուպացված մյուս երկրների ժողովուրդներին ֆաշիզմի լծից ազատագրելու համար սովետական բանակը մի քանի հաջորդական հարվածներ հասցրեց հակառակորդի զորքերին։ Առաջին հզոր հարվածը ֆաշիստական բանակին հասցվեց Լենինգրադյան և Կարելական ռազմաճակատների կողմից։ Դրա հետևանքով ֆիննական բանակը շարքից դուրս եկավ, իսկ ֆինլանդական կառավարությունը զինադադար խնդրեց և դուրս եկավ ֆաշիստական Գերմանիայի կոալիցիայից։

Հունիսի 23-ին հարձակման անցան I Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը՝ Հ. Ք. Բաղրամյանի հրամանատարությամբ և III Բելոռուսական ռազմաճակատի զորքերը՝ Ի. Դ. Չերնյախովսկու հրամանատարությամբ։ Վեց օրվա ընթացքում նրանք առաջ շարժվեցին 90 կմ։ Հուլիսի 3-ի երեկոյան փողոցային կատաղի մարտերից հետո ազատագրվեց Սովետական Բելոռուսիայի մայրաքաղաք Մինսկը։ Հակառակորդի շրջապատված զորքերը փորձում էին դուրս պրծնել շրջապատումից, բայց նրանց մեծագույն մասը ոչնչացվեց կամ գերվեց։

Ամռան ամիսներին սովետական զորքերը ազատագրեցին ողջ Բելոռուսիան և Լիտվայի տերիտորիայի 3/4 մասը։ Ավարտվեց Ուկրաինայի մաքրումը ֆաշիստներից։ Սկսվեց Լեհաստանի ազատագրումը։ Սեպտեմբերի 14-ին սկսվեց մերձբալթյան երեք ռազմաճակատների զորքերի խոշոր հարձակումը, որի հետևանքով նոյեմբերին մերձբալթյան երեք հանրապետությունները ազատագրված էին ֆաշիստական օկուպանտներից։ Այդ մարտերում գերմանական 59 զորամիավորումներից 25-ը ջախջախվեցին, 3-ը իսպառ ոչնչացվեցին, իսկ մնացածները մեկուսացվեցին Կուրլանդիայում։

Հոկտեմբերի 7-ին սկսվեց հարձակումը հեռավոր հյուսիսում ամրացված ֆաշիստական զորքերի վրա։ Երեք օրվա ծանր մարտերից հետո ֆաշիստները ստիպված եղան նահանջել։ Նոյեմբերի սկզբին սովետական զորքերը դուրս էկան Նորվեգիայի սահմանը և նորվեգական ժողովրդին օգնեցին ազատագրվելու ֆաշիզմի լծից։

Դեռևս ամռան սկզբներին հասնելով լեհ-սովետական սահմանին, հուլիս և օգոստոս ամիսներին Կարմիր բանակի զորամասերը ազատագրեցին Լեհաստանի հողերի 1/4-ը։ Այդ ժամանակ էլ կազմակերպվեց մարտնչող Լեհաստանի բարձրագույն օրգանը՝ «Կրայովա Ռադա Նարոդովան»։

Կարմիր բանակի հետագա հզոր հարվածները Յասի-Քիշինևի շրջանում արագացրին ռումին ժողովրդի ազատագրումը։ Օգոստոսի 23-ին Բուխարեստում սկսվեց զինված ապստամբություն Հիտլերի կամակատար Անտոնեսկուի ռեժիմի դեմ։ Սկսվեց ժողովրդա-դեմոկրատական հեղափոխությունը։ Սեպտեմբերի 12-ին Ռումինիան մտավ հակահիտլերյան կոալիցիայի մեջ։

Սեպտեմբերի 9-ին հաղթական ժողովրդա-դեմոկրատական ապստամբություն սկսվեց Բուլղարիայում։ Նույն օրը կազմակերպվեց Հայրենական ճակատի կառավարությունը, որը պատերազմ հայտարարեց Գերմանիային։ Կարճ ժամանակամիջոցում Կարմիր բանակը ազատագրեց նաև բուլղար ժողովրդին։

Սովետական բանակի կողմից Լեհաստանի, Բուլղարիայի և Ռումինիայի ազատագրումը օրակարգի հարց դարձրեց Չեխոսլովակիայի, Հարավսլավիայի և Հունգարիայի տերիտորիաները գերմանա-ֆաշիստական զավթիչներից մաքրելու խնդիրը։ Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում ֆաշիստական լծից ազատագրվեցին Հարավսլավիայի և Հունգարիայի ժողովուրդները։

Հայրենական պատերազմի եզրափակիչ փուլում ուժերի մեծ լարում էր պահանջվում ոչ միայն ռազմաճակատում, այլև թիկունքում։ Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այդ շրջանում ռազմաճակատն ու թիկունքը անխզելիորեն կապված էին միմյանց։ Բանակի հաջողությունները ապահովվում էին սոցիալիստական պետության տնտեսական ու բարոյական ուժերի հարաճուն զարգացմամբ։ 1944—45 թթ. մեծ վերելք ապրեցին երկրի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը։ Օրինակ, 1944 թ. 1,7 միլիոն տոննայով ավելի չուգուն է արտադրվել, քան 1943 թ., գլանվածք՝ 1,6 միլիոն, պողպատի ծուլվածք՝ 2,4 միլիոն տոննայով ավելի։ Արդյունաբերության զարգացման հետ աճում էր նաև մարտական տեխնիկայի արտադրությունը։ 1945 թ. առաջին կեսին գործող բանակը ծանր տանկեր ստացավ 1,5 անգամ ավելի, ինքնագնաց թնդանոթներ՝ երեք անգամ ավելի, քան 1944 թ.։ Նույնը կարելի է ասել զենքի այլ տեսակների, մասնավորապես հրետանու և ավիացիայի մասին։ Ուժեղ թափով զարգանում էր գյուղատնտեսությունը, հերկվում ու ցանվում էին ազատագրված մարզերի հողերը։

Չնայած գերմանա-ֆաշիստական բանակի վիճակի վատթարացմանը, նա դեռևս մեծ ուժ էր ներկայացնում։ Նրա կազմում 1945 թ. սկզբներին կար 5343000 մարդ, 28500 թնդանոթ և ականանետ, 3950 տանկ և ինքնագնաց հրետանի, 1960 սավառնակ։ Այդ նույն ժամանակ սովետական գործող բանակում կար 6532000 զինվոր ու սպա, 108 հազար թնդանոթ և ականանետ, 12900 տանկ և ինքնագնաց հրետանի, 15540 մարտական սավառնակ։ Մեր բանակի այս հզոր ուժը խորտակիչ հարվածի էր պատրաստվում, որպեսզի հաղթանակով ավարտեր պատերազմը։ Այդ պատմական խնդրի իրականացմանը զգալի օգնություն էր նաև 1944 թ. հունիսին Ֆրանսիայի հյուսիսում բացված II ճակատը։

1945 թ. հունվար-ապրիլ ամիսների ընթացքում մղած համառ մարտերի շնորհիվ սովետական բանակը մոտեցել էր Բեռլինին։ Ընդամենը 60 կմ էր բաժանում այն մեր զորքերից։ Սակայն ֆաշիստական հրամանատարությունը մոբիլիզացրել էր երկրի բոլոր միջոցները, հույս ունենալով մայրաքաղաքը չհանձնել։

Բեռլինի գրավման օպերացիային պետք է մասնակցեին երեք ռազմաճակատներ. I Բելոռուսականը (հրամանատար՝ Գ. Կ. Ժուկով), I Ուկրաինականը (հրամանատար՝ Ի. Ս. Կոնև) և II Բելոռուսականը (հրամանատար՝ Կ. Կ. Ռոկոսովսկի)։ Դրանց կազմում կար 2500000 մարդ, 41600 թնդանոթ և ականանետ, 6250 տանկ ու ինքնագնաց հրետանի և 7500 մարտական սավառնակ։

Կարմիր բանակի ծանր ու խորտակիչ հարվածների տակ մայիսի առաջին օրերին ընկավ Բեռլինը՝ ֆաշիզմի վերջին հենարանը։ Ռայխստագի վրա ծածանվեց ալ-կարմիր դրոշը։ 1945 թ. մայիսի 8-ին ստորագրվեց անվերապահ կապիտուլյացիայի ակտը։ Մայիսի 9-ից մինչև 13-ը մեր զորքերը գերեցին 780622 զինվոր ու սպա, այդ թվում 35 գեներալ, իսկ մինչև մայիսի 17-ը գերիների թիվը հասավ 1390978 մարդու։

Հունիսի 24-ին, պատերազմի սկսվելու օրից ուղիղ չորս տարի հետո, տեղի ունեցավ հաղթանակի զորահանդեսը Մոսկվայի Կարմիր հրապարակում, որին մասնակցում էին բոլոր ռազմաճակատների հավաքական գնդերը։ Մեծ հաղթանակի կապակցությամբ և պատերազմի ավարտի պատվին, Սովետական Միության Գերագույն սովետի նախագահության հրամանագրով մայիսի 9-ը հայտարարվեց Հաղթանակի տոն։

Սովետական Միությունը հանդիսացավ այն գլխավոր և վճռական ուժը, որը որոշեց երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքն ու վախճանը։ Հաղթանակով ավարտելով Հայրենական մեծ պատերազմը, մեր երկիրը վրճռական դեր խաղաց եվրոպական ժողովուրդներին ֆաշիզմի ճիրաններից ազատագրելու գործում։